*Կրթություն*

- ◊ Բազմալեզու կրթություն
- ◊ Որակի ապահովում բարձրագույն կրթության ոլորտում
- ◊ Միջնակարգ կրթությունը Եվրոպական տարբեր երկրներում /Գերմանիա, Ֆրանսիա, Դանիա և այլն/
- ◊ Կրթության զարգացում

*Իրավագիտություն*

- ◊ Մարդու իրավունք
- ◊ Եվրոպական իրավունք
- ◊ Խոսքի իրավունք
- ◊ Փախստականներ և փոքրամասնություններ
- ◊ Քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքների պաշտպանություն

***Քաղաքագիտություն, հասարակագիտություն***

- ◊ Եվրոպական միություն
- ◊ Մարդու իրավունքների Եվրոպական դատարան
- ◊ Եվրախորհրդի լեզվաքաղաքականություն
- ◊ Ազգային ժողովի ընտրություններ
- ◊ Ղարաբաղյան հակամարտություն
- ◊ Եվրոպայի և ԱՄՆ-ի սահմանադրություն
- ◊ Հայ-թուրքական դիվանագիտական հիմնահարցեր

***Գենդերային հիմնահարցեր***

- ◊ Գենդերային հետազոտություններ
- ◊ Գենդերային հավասարություն
- ◊ Գենդերային կրթություն

*Լրագրություն, ԺԼԵԿ-ի Էլեկտրոնային հրատարակումներ*

***Կենտրոնի ֆոնդերի արցանց հղումները տեղադրված են ինչպես կենտրոնի, այնպես էլ ԵՊԼՀ գրադարանի կայքէջերում՝ www.brusov.am:***


Երևանի Վ. Բրյուսովի անվան
պետական լեզվաբանական
համալսարան
Եվրախորհրդի լեզվակրթական
ծրագրերի իրականացման
կենտրոն

Հասցե՝ Երևան, Թումանյան 42փ.
(5-րդ մասնաշենք, 2-րդ հարկ)
Հեռ.՝ 535550, 531
Էլ. հասցե՝ coecenter@brusov.am
Էլ. կայք՝ www.brusov.am


European Centre for Modern Languages
Centre européen pour les langues vivantes
Europäisches Fremdsprachenzentrum

# ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ԵՎՐԱԽՈՐՀՐԴԻ ԼԵԶՎԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ



Երևան 2014

*Հարգելի՛ գործընկերներ,*

ԵՊԼՀ Եվրախորհրդի լեզվակրթական ծրագրերի իրականացման կենտրոնի այս հուշաթերթիկի օգնությամբ կարող եք ծանոթանալ կենտրոնի գործունեությանը և գրադարանային ֆոնդերին:

**Եվրախորհրդի լեզվակրթական ծրագրերի իրականացման կենտրոնը** հանդիսանում է Ժամանակակից լեզուների եվրոպական կենտրոնի և Լեզուների եվրոպական օրվա համակարգող մարմինը Հայաստանում:

**Կենտրոնի առաքելությունն** է նպաստել ժամանակակից լեզուների ուսումնառության, դասավանդման և գնահատման ոլորտում Եվրոպայի Խորհրդի գաղափարախոսության և հիմնարար արժեքների տարածմանը, ներդրմանը և ներդաշնակեցմանը ՀՀ բարձրագույն կրթության համակարգին:

**Կենտրոնն իր գործառույթներն իրականացնում է ԵՊԼՀ ամբիոնների և կենտրոնների հետ՝ գործակցելով հետևյալ ոլորտներում.**

- ԵԽ-ի լեզվակրթությանն առնչվող իրավական և ուսումնամեթոդական փաստաթղթերի տեղեկատվական բազայի ստեղծում,
- ԵԽ-ի լեզվակրթական ծրագրերի շրջանակներում իրականացվող միջոցառումներին ՀՀ կրթական համակարգի ներկայացուցիչների ներգրավվածությանը նպաստում,
- ՀՀ բարձրագույն և միջնակարգ կրթության համակարգում ԵԽ-ի լեզվակրթությանն առնչվող տեղեկատվության տարածման նպատակով միջբուհական և բուհական քննարկումների, համաժողովների և գիտաժողովների կազմակերպում,:

2010թ.-ից ի վեր կենտրոնի և ԵԽ ԺԼԵԿ-ի համագործակցությամբ իրականացվել են մի շարք միջազգային համաժողովներ և գիտաժողովներ՝ «ԼԻՀՀ-ի գնահատման սանդղակ», «Օտար լեզուների քննությունների համապատասխանեցումը ԼԻՀՀ-ին», «Ցուցիչներ ազգային և տարածաշրջանային լեզուների համար», «Լեզուներին և մշակույթներին բազմակի մոտեցումների համակարգ» և այլն:

2001թ.-ից ի վեր՝ Լեզուների եվրոպական օրը ամենամյա տոնակատարություն է մեր բուհում: Այս օրը նշանավորվում է տարաբնույթ միջոցառումներով և մասնակիցներին ԺԼԵԿ-ի կողմից տրամադրվող հուշանվերներով:



***Սիրով հրավիրում ենք Ձեզ համագործակցելու վերը նշված ոլորտներում, ինչպես նաև օգտվելու Ջ. Շիլզի և Եվրախորհրդի գրադարանային ֆոնդերից:***

Կենտրոնի ֆոնդերը ներառում են ավելի քան 850 կտոր գիրք անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն և հայերեն լեզուներով, որոնք վերաբերում են հետևյալ ոլորտներին՝

***Մանկավարժություն և լեզվի դասավանդման մեթոդիկա***

◊ Անգլերենի, ֆրանսերենի, գերմաներենի դասավանդման մեթոդիկա
◊ Գնահատում ըստ Լեզուների իմացության համաեվրոպական համակարգի
◊ Լեզվական գիտելիքների ստուգման ուղեցույցներ
◊ Բազմալեզվություն և բազմամշակութայնություն /նաև անեկդոտներ բազմամշակութայնության հմտությունների զարգացման համար/
◊ Հաղորդակցություն /նաև խաղային տեխնոլոգիաների միջոցով/
◊ Ուսումնական պլանների և ծրագրերի կազմում
◊ Լեզու ուսումնասիրողների ինքնուրույնության ապահովում




